

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ «ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 21.12.2021 թ.-ից

Արժույթ	Ավանդի նվազագույն գումար	Ավանդի առավելագույն գումար	Տոկոսագումարի վճարում	732 օր	Ժամկետ 1095 օր
---------	--------------------------	----------------------------	-----------------------	--------	-------------------

AMD	10,000,000	30,000,000	Ժամկետի վերջում	6.25%	6.75%
-----	------------	------------	-----------------	-------	-------

1. Ավանդի տոկոսադրույքը կախված է ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի տատանումներից:
2. Ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի աճի դեպքում Ավանդատուն ստանում է բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարի և Ավանդատուի մասնակցության գործակցով հաշվարկված արժեթղթի մաքուր գնի աճի հանրագումարը:
3. Պայմանագրով սահմանված ժամկետի վերջում, Ավանդի հիմքում ընկած Արժեթղթի գնի աճի բացակայության դեպքում Հաճախորդը ստանում է միայն պայմանագրով սահմանված բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարը:
4. Հաճախորդն իրավունք չունի ավանդի գործողության ընթացքում փոփոխելու՝ ավելացնելու կամ նվազեցնելու ավանդի գումարը:
5. Հաճախորդն իրավունք ունի ավանդային պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ետ ստանալ ավանդը: Այդ դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ՝ ավանդի գումարից գանձելով արդեն իսկ վճարված տոկոսագումարները, և վճարելով տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար:
6. Տոկոսային եկամուտները հարկվում են համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի:
7. Այլ լրացուցիչ պայմանները կարգավորվում են պայմանագրով կամ լրացուցիչ համաձայնագրով:

8. Հաճախորդն իրավունք ունի իր կողմից ներդրված ավանդի գրավով ստանալ վարկ՝ Բանկի կողմից սահմանված պայմաններով: Եթե հաճախորդը վարկի ստացման դիմումը ներկայացնում է մինչև տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ը, ապա վարկը տրամադրվում է հաճախորդին մինչև տվյալ բանկային օրվա գործառնական օրվա ավարտը: Եթե հաճախորդը վարկի ստացման դիմումը ներկայացնում է տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ից հետո, ապա վարկը տրամադրվում է հաճախորդին հաջորդ բանկային օրվա ընթացքում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 01.01.2022 թ.-ից

ԱՐԺՈՒՅԹ					
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Շվեյցարական ֆրանկ	
5.00%	0.50%	0.25%	1.00%	-2.00%	

Տոկոսագումարը հաշվարկվում է, եթե ամսվա ընթացքում հաշվի միջին օրական մնացորդը կազմում է նվազագույնը 500,000 ՀՀ դրամ, 2,000 ԱՄՆ դոլար, 2,000 Եվրո, 150,000 ՌԴ ռուբլի: Տոկոսագումարը վճարվում է հաշվարկմանը հաջորդող ամսվա առաջին բանկային օրը:

Ֆիզիկական անձանց գծով հաշվարկված տոկոսագումարից պահվում է 10.0% եկամտահարկ:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Հասցե՝ Վ. Սարգսյան 10, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ +374 60 757 000

Ֆաքս՝ +374 10 540 675

Էլ-փոստ՝ info@armswissbank.am